# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱԶԳԵԱՏ-24/18 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 10 | բաճկոն — տաբատ | բաճկոն — տաբատ | բաճկոն — տաբատ | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Ամենօրյա համազգեստ բաճկոն՝ մուգ կապույտ 44% բուրդ, 54% պ/է, 2% լաիկրա բաղադրության, 240 գր/մ2 խտությամբ RIBSTOP կտորից, կոճկվում է կենտրոնական շղթայով, հետևամասը և առաջամասը՝ վերին կտրվածքով, լանջափեշերի վրա վերևից ուղղահայաց վրադիր գրպաններ են՝ ուղղանկյուն կափույրներով: Բաճկոնի կողային գրպանները՝ շեղակի կտրվածքով, շղթայով կոճկվող: Օձիքը՝ ծալովի, թևքերը՝ թեզանիքներով, որոնք կոճկվում են երկու կոճակ օղակներով:Բաճկոնի ձախ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | կրծքամասում ամրացվում է մուգ կապույտ կտորի վրա “ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵ” ոսկեգույն տառերով գրվածքը, իսկ աջ կրծքամասում` “ԱՆՈՒՆ ԱԶԳԱՆՈՒՆ” գրվածքը: Բաճկոնը գոտիով է, կողքերից էլաստիկ ժապավենով ձգված: Ուսադիրների շրջանում` երկու փակօղակներ և երկու կամրջակներ ուսադիրների ամրացման համար: Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև Հակակոռուպցիոն Կոմիտեի կարմիր եզրագծով թևքանշանն է (Ձև 8, Նկար 9): Բարձրագույն դասային աստիճան ունեցող Կոմիտեի ծառայողների համար` օձիքը ծալովի, որի ծայրին ոսկեգույն ասեղնագործություն է (Ձև 8, Նկար 10): Ձախ թևի ուսակարից 90 մմ ներքև ՀՀ զինանշանի կարմիր եզրագծով թևքանշանն է (Ձև 6, Նկար 6), իսկ աջ թևի ուսակարից 90 մմ ներքև` Հակակոռուպցիոն Կոմիտեի կարմիր եզրագծով թևքանշանը (Ձև 6, Նկար 7): Համաձայն` ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման: Ամենօրյա համազգեստ տաբատ ` |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մուգ կապույտ 44% բուրդ, 54% պ/է, 2% լաիկրա բաղադրության, 240 գր/մ2 խտությամբ RIBSTOP կտորից, ուրվագիծը՝ ուղիղ, կողային կարերով անցնում է կարմիր 1 եզրագիծ՝ 1.5-ից 2 մմ լայնությամբ, երկու կողային գրպաններով, հետնամասի վրա կափույրով և կպչունակով փակվող երկու վրադիր գրպան է: Գոտին՝ երկու կողքերից էլաստիկ ժապավենով ձգվող: Տաբատը՝ շղթայով փակվող, գոտին կոճկվում է կոճակ-օղակով, գոտու վրա 8 հատ գոտեմակ օղակներ են (Ձև 8, Նկար 8, 9): Բարձրագույն դասային աստիճան ունեցող Կոմիտեի ծառայողների համար կողային կարերով անցնում է կարմիր 3 եզրագիծ, 2-ը՝ 2 սմ լայնությամբ, իսկ մեջտեղինը՝ 1,5-ից 2 մմ (Ձև 8, Նկար 10), Համաձայն՝ ՀՀ կառավարության 22.09.2022թ N 1476-Ն որոշման: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՀԿԿ-ԷԱՃԱՊՁԲ-ՀԱՄԱՁԳԵԱՏ-24/18 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 10 | | | | | |